ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

31 հունվարի ուրբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

10
(3041)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ԱԺ-Ն «ԲԱՆՏԱՐԿԵԼ» ԷՐ ՕԹՅԱԿՈՒՄ

Անհետ կորած զինվորների ծնողների 5-ամյա դժգոհությունները փարատելու համար երեկ ԱԺ-ում կրկին հանդիպում էր կազմակերպվել:

«Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ ԱԺ-ում երեկ անհետ կորած զինծառայողների ծնողների եւ իրավահաջորդների հետ դռնփակ հանդիպում էր կազմակերպվել, որին մասնակցում էին ՀՀ Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, ՀՀ ԱԱԾ պետ Արմեն Աբազյանը, ՀՀ Քննչական կոմիտեի նախագահ Արթուր Պողոսյանը, ՊՆ փոխնախարար Արման Սարգսյանը, ՄԻՊ Անահիտ Մանասյանը, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը եւ ընդդիմադիր ու իշխանական պատգամավորներ: Հանդիպմանը, սակայն, որքան հնարավոր է՝ նվաստացրել էին ծնողներին ու հարազատներին՝ նրանցից պահանջելով, որ 200-ից ավելի նստարան ունեցող ԱԺ նիստերի դահլիճում ընդամենը մի քանի ներկայացուցիչներ նստեն, մյուս ծնողների անունից հարցեր ուղղեն պաշտոնյաներին, իսկ ծնողների մի մասն էլ ԱԺ օթյակից է լուռ հետեւել քննարկմանը:

Հանդիպումը անհետ կորած զինվորների ծնողների պահանջով նախաձեռնել էր ԱԺ Պաշտպանության եւ Ազգային անվտանգության հարցերի հանձնաժողովը:

«Ժողովուրդ» օրաթերթին անհետ կորած զինվորների ծնողները հայտնեցին, որ 5 ժամից ավելի տեւած հանդիպումը անարդյունք է եղել, իրենց կողմից բարձրացված որեւէ հարց հստակ պատասխան չի ստացել, իրենց տպավորությամբ՝ այս 5 տարիների ընթացքում սայլը տեղից չի շարժվել, ու արդյունավետ աշխատանք չի արվել:

Ընթացքում գոռգոռոցներ էին լսվում ԱԺ դահլիճից, ծնողները բղավում էին ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եւ Անդրանիկ Քոչարյանի վրա, նրանք էլ իրենց հերթին էին բղավում ծնողների վրա: Բայց, ծնողների պատմելով, դժգոհությունները հատկապես շատ էին ՔԿ նախագահ Արթուր Պողոսյանից, որը, ծնողների փոխանցմամբ, իրավիճակին չէր տիրապետել: Թեեւ հասկանալի է, քանի որ նա 64 օր է ինչ նշանակվել է Կոմիտեի նախագահ եւ չէր կարող բոլոր գործերի մանրամասներին տիրապետել:

«Ժողովուրդ» օաթերթը տեղեկացավ, որ ծնողների այս դժգոհությունները մեղմելու համար Անդրանիկ Քոչարյանը խոստացել է մեկ ամիս անց ԱԺ-ում կրկին պաշտոնյաների մասնակցությամբ հանդիպում կազմակերպել:

ՀՀ քննչական կոմիտեն շուրջ 30 ծանուցում է ուղարկել 2024 թվականի ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի անմար կրակին մոտենալու ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կնոջ՝ Աննա Հակոբյանի եւ նրա դստեր հետ տեղի ունեցած միջադեպի վկաներին: 30 ծանուցվածների մեծ մասը «Ազգային ժողովրդավարական բեւեռի» անդամներն են, որոնց Քննչական կոմիտեն ամեն օր հրավիրում է հարցաքննության: Իրավապահները շարունակում են փնտրել վարչապետի կնոջը Ծիծեռնակաբերդում «դավաճան», «հողատու» բղավողներին, բայց նրանց ձայնը կա՝ իրենք չկան: Հիշեցնենք, որ 2024թ. ապրիլի 24-ին՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի անմար կրակին մոտենալու ժամանակ, վարչապետ Նիկոլ Փաշինյանի կնոջ՝ Աննա Հակոբյանի եւ նրա դստեր ներկայությամբ «Ազգային ժողովրդավարական բեւեռի» անդամները բղավել էին՝ «դավաճան», «հողատու»: Միջադեպից հետո 7 անձ ձերբակալվել էր: Արդյունքում՝ մի խումբ անձանց կողմից առերեւույթ ատելության, խտրականության, անհանդուրժողականության կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսք հնչեցնելու, եւ հաղորդակցային-տեղեկատվական մի քանի միջոցներով տարածելու գործողությունների դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության՝ Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից, նախնական համաձայնությամբ ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը) նախաձեռնվել է քրեական վարույթ: Այս գործով կա մեկ մեղադրյալ՝ 67-ամյա Տիգրան Դրմեյանը, որը Բեւեռի անդամ է, ու նրա մասով գործը արդեն դատարանում է:

Այսօր՝ հունվարի 31-ին, Երեւանի ավագանու արտահերթ նիստ կկայանա՝ մեկ ուղեւորության համար 150 դրամ սակագին սահմանելու օրակարգով: Նիստը նախաձեռնել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ընդդիմադիր «Ազգային առաջընթաց» եւ «Մայր Հայաստան» խմբակցությունները բոյկոտելու են նիստը: ArmLur.am-ին ընդդիմադիր «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը հայտնեց, որ բոյկոտելու են նիստը, չեն մասնակցելու: «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանն էլ նշեց, որ ի սկզբանե քվորում չեն ապահովելու, բայց եթե նիստը կայանա, մասնակցելու են եւ իրենց դիրքորոշումը հայտնեն: Արտահերթ նիստին քվորում ապահովելու համար անհրաժեշտ է առնվազն 33 ձայն: Հիշեցնենք, որ դժգոհությունների ալիքի ֆոնին Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ փետրվարի 1-ից կներդրվի նոր ուղեւորատոմս՝ մեկ ուղեւորության արժեքը սահմանելով 150 դրամ, սա գործելու է ամբողջ 2025 թվականի ընթացքում: Նա նշեց, որ առաջարկվող մեկ ուղեւորության համար սահմանված 150 դրամը ամեն տարի կարող է փոփոխվել առավելագույնը 10 դրամով եւ միայն շարունակվող բարեփոխումների պայմաններում: Կարճ ասած՝ նահանջ երգով:

Համընդհանուր հայտարարագրի հանդեպ քաղաքացիների տածած ատելությունից ելնելով՝ իշխանությունն ամեն կերպ փորձում է 720 հազար անձից հայտարարագիր կորզել՝ գայթակղիչ թվեր հնչեցնելով: Երեկ վարչապետը բացահայտ կաշառք էր առաջարկում: Նա «Ընտանեկան փոդքաստի» 5-րդ թողարկման ժամանակ հավաստիացնում էր, որ եկամուտները հայտարարագրելուց հետո քաղաքացիներին, ենթադրաբար պետական բյուջեից, վերադարձվելու է, որոշակի գումար, որը կազմում է շուրջ 70 միլիարդ դրամ: Փորձենք հասկանալ, թե ինչպե՞ս է Փաշինյանը դա բյուջեից ուղղելու հայտարարագրողներին՝ որպես սոց. երաշխիք: Բանն այն է, որ 2025-ի բյուջեում նման ծրագրի համար նախատեսված է 0 դրամ: Սակայն այս հարցին անգամ տնտեսագետները դժվարացան պատասխան տալ, երբ «Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվեց: Բյուջեով նախապես չպլանավորված է այդ 70 մլրդ դրամը, իսկ օրենքներով ու Կառավարության որոշումներով գուցե ինչ-որ քայլեր արվեն, որն ամեն դեպքում խախտում կհամարվի, քանի որ բյուջեում 70 մլրդի մասով ոչինչ նախատեսված չէ հատկացման վերաբերյալ: Իհարկե, չի բացառվում, որ Փաշինյանը փոշմանի, ինչպես եղավ Երեւանի տրանսպորտային սակագնային պլանների դեպքում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

ՏՈՒԺՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԲՈՒԺՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

ՀՀ Կառավարության երեկվա՝ հունվարի 30-ի նիստում որոշվեց «Մեծամորի հիվանդանոց» ՓԲԸ-ն եւ «Մեծամորի պոլիկլինիկա» ՓԲԸ-ն միաձուլման ձեւով վերակազմակերպել՝ ստեղծելով «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն:

Որոշվել է պոլիկլինիկայի նեղ մասնագիտական ծառայություններն ինտեգրել Մեծամորի հիվանդանոցին, իսկ ստացիոնար ծառայությունները ենթարկել ներքին օպտիմալացման՝ միավորելով մեծահասակների եւ մանկական թերապեւտիկ բաժանմունքները մեկ թերապեւտիկ ծառայության մեջ՝ 20 մահճակալով, իսկ Վիրաբուժական բաժանմունքի 15 մահճակալների տեղերը կրճատել:

Թեմայի վերաբերյալ ArmLur.am-ը կապ է հաստատել «Առողջության իրավունք» ՀԿ նախագահ Անուշ Պողոսյանի հետ՝ պարզելու՝արդյոք այս ամենում կան կոռուպցիոն վտանգներ:

«Առողջության իրավունք» ՀԿ նախագահ Անուշ Պողոսյանը ArmLur.am-ին ասաց, որ հիվանդանոցային օպտիմալացում են անում:

-Խնդիրը այն է, որ Մեծամորի հիվանդանոցը տեւական ժամանակ շատ պարտքեր էր կուտակել, եւ վիրաբուժական ծառայությունը չէր աշխատում, այսինքն՝ չունեին վիրաբույժներ: Մանկականն ու թերապեւտիկը կառավարության հետ որոշում կայացրին՝ լիցենզավորված պայման-պահանջների փոփոխությամբ: Ասացին, որ մարզերում հնարավոր է՝ մանկական թերապեւտիկ բաժանմունքները ծավալվեն մեկ բաժնում, այդ բաժինն էլ երկու սպասարկում անի. դրա հիմքով, որպեսզի աշխատուժը կրճատեն, այսինքն՝ մեկ պոստ պահեն, մի խումբ բուժքույրերի, սանիտարուհիների օպտիմալացումն են արել՝ ֆինանսական վիճակը բարելավելու համար:

Սա բոլոր մարզերում կատարվելու է, քանի որ կադրային անհասկանալի քաղաքականությունը՝ մարզային առողջապահության հետ կապված չմոտիվացնող, չսուբսիդավորող ծառայությունները, բերում են նրան, որ գնալով փակվելու են բաժանմունքները, այնուհետեւ՝հիվանդանոցներ: Ես վստահ եմ, որ շատ շուտով նման փոփոխություններ կլինեն նաեւ մյուս մարզերում:

-Տիկին Պողոսյան, այս փոփոխությունները ի՞նչ խնդիրներ կառաջացնեն:

-Ես կարծում եմ, որ առաջինը անհասանելիություն է առաջացնելու, քանի որ վիրաբուժական ծառայության համար այսուհետեւ Մեծամորի ազգաբնակչությունը պետք է իր տարածաշրջանից դուրս գա, իսկ գոհունակության ցուցանիշը մարդկանց մոտ հասանելիությունն է: Այդ առումով բնակչությունը տուժելու է: Իսկ երբ մանկական ու թերապեւտիկ բաժանմունքները միացնում են իրար, այստեղ կան նաեւ էպիդեմիոլոգիական խնդիրներ, այսինքն՝ վարակի տարածման վտանգ: Ծառայությունները բերել ու իրար միացնելը ինչպե՞ս են պատկերացնում. օրինակ՝ սրտամկանի ինֆարկտով կամ ծանր թոք-սրտային անբավարարությամբ հիվանդ լինի, մյուս պալատում՝ մեկ տարեկան երեխա, որը հիվանդության պատճառով լացում է: Կարծում եմ՝ պետք է իդեալական հոսքեր ապահովեն, որպեսզի ճիշտ լինի դա: Իսկ արդյոք կարո՞ղ են իդեալական հոսքեր ապահովել, կարո՞ղ է մի բժշկական պոստում աշխատողը սպասարկել ե՛ւ մանկական, ե՛ւ մեծահասակ բուժայցելուներին: Մենք նորից բժշկական սպասարկման որակի ռիսկերի ենք բախվում:

-Իսկ ի՞նչ կասեք կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ:

-Կոռուպցիայի մասին թվերով պետք է խոսել: Այստեղ խնդիրն այն է, որ լինելու են բուժպերսոնալի կրճատումներ: Նորից մի քանի տասնյակ մարդ մնալու է անգործ՝ նման օպտիմալացումների հետեւանքով: Իսկ թե տվյալ բժշկական կենտրոնը, խոսքը Մեծամորի մասին չէ, ինչպես կընտրի այդ պերսոնալին, ինչպես դրանով կաշխատի, արդյոք այդտեղ կդրվի կոռուպցիոն կոմպոնենտ, թե ոչ, ամեն դեպքը պետք է յուրովի քննարկվել: Ենթադրենք՝ 4 բուժքույրից մեկին են միայն պահում, ինչպե՞ս են ընտրում այդ մեկին: Այսպիսի հարցեր կան, որ մասնավոր, ինդիվիդուալ պետք է քննարկվեն:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ԿՈՉ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

ԵԽԽՎ-Ն ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼ ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻՆ

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովն ընդունած բանաձեւում Ադրբեջանին կոչ է արել ազատ արձակել Լեռնային Ղարաբաղի նախկին ռազմաքաղաքական ղեկավարներին եւ մյուս հայերին: Այս մասին նշված է ԵԽԽՎ-ի տարածած հայտարարության մեջ:

Բանաձեւն անդրադարձել է Ադրբեջանում ապօրինի եւ շինծու մեղադրանքներով անազատության մեջ պահվող Լեռնային Ղարաբաղի նախկին ռազմաքաղաքական ներկայացուցիչների եւ այլ անձանց՝ կոչ անելով Ադրբեջանին ազատ արձակել այդ մարդկանց:

«Վեհաժողովը շարունակում է հետեւել Լեռնային Ղարաբաղի եւ բոլորի կալանավորված անձանց եւ ռազմագերիների հետ կապված իրավիճակին, որոնք ներկայում գտնվում են Ադրբեջանում՝ վերահաստատելով նրանց ազատ արձակելու իր կոչը»,-նշված է բանաձեւում:

Վեհաժողովը նաեւ խիստ մտահոգություն է հայտնել Ադրբեջանում ժողովրդավարության, օրենքի գերակայության եւ մարդու իրավունքների վատթարացման առնչությամբ:

«Վեհաժողովը շարունակում է լրջորեն մտահոգված լինել Ադրբեջանում ժողովրդավարության վատթարացման, քաղաքական եւ քաղաքացիական հասարակության ակտիվիստների, լրատվամիջոցների ներկայացուցիչների եւ իշխանության այլ քննադատների նկատմամբ բռնությունների առնչությամբ»,-նշված է բանաձեւում:

Բանաձեւը կոչ է անում Ադրբեջանի իշխանություններին դադարեցնել հետապնդումները եւ անհապաղ ազատ արձակել բոլոր նրանց, որոնք կալանավորվել են քաղաքական դրդապատճառներով: Այն իշխանություններին կոչ է անում փոփոխություններ կատարել «Կուսակցությունների մասին» եւ «Լրատվամիջոցների մասին» օրենքում եւ ՀԿ-ներին վերաբերող համապատասխան օրենսդրության մեջ՝ համաձայն Վենետիկի հանձնաժողովի առաջարկությունների:

Բանաձեւում նաեւ նշվում է, որ Ադրբեջանում 2024 թվականին կայացած նախագահական ընտրությունները չեն համապատասխանել ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշներին եւ կայացել են խոսքի, հավաքների ազատության սահմանափակումների պայմաններում:

ԾՈՎԻՆԱՐ ԲԱՐՍԵՂՅԱՆՆ ԱԶԱՏՎԵԼ Է ՊԱՇՏՈՆԻՑ

Ծովինար Բարսեղյանը ազատվել է փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի խորհրդականի պաշտոնից: Այդ մասին որոշումը հրապարակված է Կառավարության կայքէջում:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 14-րդ մասով՝ Ծովինար Բարսեղյանին 2025 թվականի հունվարի 31-ից ազատել փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի խորհրդականի պաշտոնից»,- նշված է փոխվարչապետի որոշման մեջ:

ՄՈՍԿՎԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ Է ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ. ՕՎԵՐՉՈՒԿ

Մոսկվան լավ առաջընթաց է արձանագրում Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանազատման եւ սահմանագծման հարցում: Այս մասին հայտարարել է ՌԴ փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկը:

«Շատ մեծ, լավ առաջընթաց է գրանցվել: Սահմանի մի մասը սահմանազատվել եւ սահմանագծվել է: Հայաստանի փոխվարչապետ Միհեր Գրիգորյանը եւ Ադրբեջանի փոխվարչապետ Շահին Մուստաֆաեւը, որքանով ինձ հայտնի է, վերջերս հանդիպել են, պայմանավորվել են սահմանազատման եւ սահմանագծման գործընթաց սկսելու մասին, շարժվելու են հյուսիսից հարավ՝ Ադրբեջանի, Հայաստանի եւ Վրաստանի սահմանների խաչմերուկից, եւ գնալու են ներքեւ»- նշել է Օվերչուկը:

Նրա խոսքով՝ ՌԴ-ն միշտ ողջունել է նման շփումները եւ նման համատեղ աշխատանքը, քանի որ, ըստ նրա, դա անկասկած կնպաստի տարածաշրջանի կայունությանը:

ԿՈՎԿԱՍՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄՆՈՒՄ Է ԱՆԿԱՅՈՒՆ

Կովկասյան տարածաշրջանում իրավիճակը մնում է անկայուն, ասել է ՀԱՊԿ միացյալ շտաբի պետ Անդրեյ Սերդյուկովը ճեպազրույցի ժամանակ:

Նա ընդգծել է, որ տարածաշրջանում լարվածությունը սրվում է արեւմտյան երկրների՝ Հարավային Կովկասում իրենց ազդեցությունն ամրապնդելու փորձերով:

«Կովկասյան տարածաշրջանում իրավիճակը մնում է անկայուն, եւ դրա կարգավորման գործընթացը շարունակվում է: Կենտրոնական ասպեկտը մնում է հայ-ադրբեջանական սահմանի սահմանազատումը եւ խաղաղության պայմանագրի կնքման նախապատրաստումը», - նշել է Սերդյուկովը:

ՆԱԽԿԻՆ ՍԵՆԱՏՈՐ ՄԵՆԵՆԴԵՍԸ 11 ՏԱՐՈՎ ԿԱՋԱՏԱՋՐԿՎԻ

ԱՄՆ նախկին սենատոր Ռոբերտ Մենենդեսը կաշառակերության եւ կոռուպցիայի մեղադրանքով դատապարտվել է 11 տարվա ազատազրկման, հայտնում են ամերիկյան լրատվամիջոցները:

Նախկին սենատորն ասել է, որ իր դեմ հարուցված գործը «քաղաքական հետապնդում է»:

«Սա քաղաքական դատավարություն է»,- ասել է Մենենդեսը դատավարությունից հետո:

2024 թվականի հուլիսին երդվյալ ատենակալները Մենենդեսին մեղավոր են ճանաչել 16 հոդվածներով, այդ թվում՝ կաշառակերություն, շորթում, խարդախություն, արդարադատության խոչընդոտում եւ որպես օտարերկրյա գործակալ: Մեղադրող կողմի տվյալներով՝ Մենենդես ամուսինները Եգիպտոսի եւ Կատարի կառավարությունների համար լոբբինգ անելու դիմաց ստացել են կանխիկ գումար, ոսկու ձուլակտորներ եւ այլ նվերներ: Մասնավորապես, ինչպես ենթադրում են քննիչները, սենատորը խոստացել է հեշտացնել Եգիպտոսին ռազմական մատակարարումների եւ օգնության համակարգումը:

Դատավճռի հրապարակումից անմիջապես հետո Սենատի մեծամասնության առաջնորդ Չակ Շումերը Մենենդեսին կոչ արեց հեռանալ պաշտոնից, իսկ սենատորը օգոստոսին հրաժարական տվեց: Նա դարձավ առաջին պետական պաշտոնյան, ով դատապարտվեց պաշտոնավարման ընթացքում որպես օտարերկրյա գործակալ հանդես գալու համար:

Meta–Ն ԹՐԱՄՓԻՆ ԿՎՃԱՐԻ 25 ՄԼՆ ԴՈԼԱՐ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը չորեքշաբթի համաձայնագիր է ստորագրել Meta կորպորացիայի հետ՝ 2021 թվականի հունվարի 6-ին Կապիտոլիումի գրոհից հետո Meta-ին պատկանող Facebook եւ Instagram սոցիալական ցանցերում նրա էջերի արգելափակման գործի վերաբերյալ: Կորպորացիան Թրամփին կվճարի 25 միլիոն դոլար: Այս մասին հայտնում է The Wall Street Journal-ը:

Պարբերականի փոխանցմամբ՝ գործը կարճելու գործարքի պայմանների համաձայն՝ 22 մլն դոլար կուղղվի նախագահի գրադարանային հիմնադրամին, մնացած գումարը կուղղվի դատական ծախսերին: Կորպորացիան հրապարակայնորեն չի ընդունի իր մեղքը, նշվում է հրապարակման մեջ:

The New York Times-ը գրել է, որ Meta-ի ղեկավար Մարկ Ցուկերբերգը վերջին մեկուկես տարվա ընթացքում փորձում է բարելավել հարաբերությունները Թրամփի հետ, որպեսզի իր կորպորացիան պաշտպանի նոր վարչակազմի հնարավոր թիրախավորումից:

Թրամփի էջերը Facebook-ում, Instagram-ում, Twitter-ում (այժմ՝ X) եւ YouTube-ում արգելափակվել էին 2021 թվականի սկզբին այս հարթակների կիրառման կանոնների խախտման պատճառով. նույն տարվա հուլիսին Թրամփը դատի էր տվել սոցցանցերի ղեկավարությանը:

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԻՃԱՀԱՐՈՒՑ ԵՆ ՀԱՄԱՐՈՒՄ

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻՑ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ ԵՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԽՈՍՔԵՐԻՆ

2025 թվականի հունվարի 24-ին Ցյուրիխում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հնչեցրել է հայտարարություններ, որոնք դարձել են մեծ խնդիր: Փաշինյանի հայտարարության համաձայն՝ դեռ պետք է հասկանալ՝ ինչ է տեղի ունեցել Հայոց ցեղասպանության ժամանակ ինչ է տեղի ունեցել:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի համոզմամբ՝ պետք է դեռ հասկանալ՝ ինչ է տեղի ունեցել Հայոց ցեղասպանության ժամանակ, ինչու եւ ում միջոցով ենք ընկալել Հայոց ցեղասպանությունը:

Այդ հանդիպման ժամանակ հանդիպմանը ներկա հյուրերից որեւէ մեկը արձագանք չէր տվել Փաշինյանի հակահայ խոսքերին:

Այսօր հայկական լրատվամիջոցները Շվեյցարիայի Հայկական եւ Հայամետ Միությունների Խորհրդից (CAAS) Փաշինյանի խոսքերին ի պատասխան՝ մամուլի հետեւյալ հաղորդագրություն են ստացել:

«Արձագանք՝ ի պատասխան 2025 թվականի հունվարի 24-ին Ցյուրիխում Հայաստանի վարչապետի հնչեցրած հայտարարություններին.

Շվեյցարիայի Հայկական եւ Հայամետ Միությունների Խորհուրդը (CAAS) իր խոր մտահոգությունն է հայտնում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ Ցյուրիխում Շվեյցարահայ համայնքի տարբեր ոլորտներում ներգրավված անդամների հետ վերջին հանդիպման ժամանակ արված հայտարարությունների կապակցությամբ: Այս հայտարարությունները, որոնք մենք համարում ենք վիճահարույց, վարկաբեկում են Հայոց ցեղասպանության հիշատակը եւ օրինաչափ հարցեր են առաջացնում մարդկության դեմ այս հանցագործության ամբողջական ըմբռնման եւ դրա միջազգային ճանաչման Հայաստանի կառավարության հանձնառության վերաբերյալ:

Ավելի քան կես դար Հայոց ցեղասպանության ճանաչումը առաջնահերթություն է եղել զոհերի ժառանգների եւ հանուն պատմական արդարության գործող կազմակերպությունների համար: Որպես Շվեյցարիայի հայկական սփյուռք՝ մենք կարծում ենք, որ այս ճանաչման կարեւորությունը թերագնահատելը կամ հարաբերականացումը հակասում են աշխարհասփյուռ հայ համայնքի ակնկալիքներին:

Հիշեցնում ենք, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը հիմնված է անվիճելի պատմական փաստերի վրա, որոնք հաստատվել են հարյուրավոր հետազոտողների, ակադեմիական հաստատությունների եւ մի շարք պետությունների կողմից, այդ թվում՝ Շվեյցարիայի, որը պաշտոնապես ճանաչել է Հայոց ցեղասպանությունը 2003 թվականին իր Ազգային խորհրդի մակարդակով, բայց ամենակարեւորը՝ հենց Հայաստանի Հանրապետության կողմից: Ցեղասպանության ճանաչմանն ուղղված այս պայքարը վեր է քաղաքական բաժանումներից եւ համընդհանուր արդարություն է հետապնդում:

CAAS-ը կոչ է անում Հայաստանի կառավարությանը եւ նրա ներկայացուցիչներին կատարել իրենց պարտականությունները: Հայոց ցեղասպանության ճանաչումը երբեք չպետք է վտանգի ենթարկվի քաղաքական կամ դիվանագիտական նկատառումներով, եւ չպետք է թույլ տա հայ ազգի հակառակորդներին շահարկել նման հայտարարությունները ժխտողական նպատակներով: Մենք կոչ ենք անում վարչապետին պարզաբանել իր արտահայտությունները եւ միանշանակ վերահաստատել իր հավատարմությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը:

Եթե Հայաստանի կառավարությունը շարունակի հրաժարվել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար պայքարից, CAAS-ի, ընդհանրապես Սփյուռքի եւ այս գործի բոլոր դաշնակիցների պարտականությունը կլինի անդադար շարունակել այս պատմական պայքարը: Զոհերի հիշատակը, նրանց ժառանգների պատիվը, արդարության ու ճշմարտության հիմնարար սկզբունքները պահանջում են, որ երբեք չդադարեցվի այդ պայքարը՝ անկախ քաղաքական հանգամանքներից կամ հանդիպած խոչընդոտներից:

Մենք նաեւ կոչ ենք անում հայկական սփյուռքին եւ հայ ժողովրդի բարեկամներին մնալ միասնական եւ զգոն՝ ընդդեմ ռեւիզիոնիզմի (հաստատված փաստերի վերանայման) կամ մեր ընդհանուր գործը մղող հիմնարար արժեքներից հրաժարվելու ցանկացած փորձի: Զոհերի հիշատակը, նրանց ժառանգների արժանապատվությունը եւ պատմության դասերը չեն կարող զոհաբերվել կարճաժամկետ շահերի անվան տակ:

Ինչպես Հայաստանի կառավարությունը, այնպես էլ մենք ձգտում ենք տարածաշրջանում արդար եւ կայուն խաղաղության: Մասնավորապես, CAAS-ը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության հետ մեր համապարտությունը հայտնելու համար, հատկապես նրա ազգային անվտանգության եւ տարածքային ամբողջականության առնչությամբ: Ուստի, հրամայական է, որ այս դժվարին պահին Սփյուռքն ու Հայաստանը մնան միասնական եւ հետեւողական իրենց հավատարմությանը միջազգային իրավունքին, արդարությանը եւ պատմական ճշմարտությանը: CAAS-ը վերահաստատում է ցեղասպանության ճանաչման եւ կանխարգելման իր անսասան հանձնառությունը եւ կշարունակի աշխատել իր գործընկերների հետ Շվեյցարիայում եւ միջազգային մակարդակում նոր հանցագործությունների կատարման դեմ պայքարելու, հիշողությունը պահպանելու եւ արդարությունը խթանելու համար»,- ասված է հայտարարությունում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԵՎՍ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ

ՀՀ-ՈՒՄ ԿԵՐԿԱՐԱՁԳՎԻ ԵՄ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Եվրամիության երկրների դեսպանները երեկ Բրյուսելում հավանություն են տվել Հայաստանում Եվրամիության խաղաղացիական առաքելության մասին որոշմանը, որով եվրոպացի դիտորդները կմնան Հայաստանի սահմանամերձ շրջաններում եւս երկու տարի՝ մինչեւ 2027 թվականի փետրվարի 19-ը:

«Ազատության» Եվրոպայի հարցերով խմբագիր Ռիկարդ Յոզվյակի հաղորդմամբ՝ Եվրամիությունն անփոփոխ է թողել առաքելության մանդատը, որ տրվել էր երկու տարի առաջ՝ նպաստել Հայաստանի սահմանամերձ եւ հակամարտությունից տուժած շրջաններում միջադեպերի թվի նվազմանը, նվազեցնել այդ շրջաններում ապրող բնակչության համար վտանգի աստիճանը եւ դրանով նպաստել գետնի վրա հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորմանը:

Դիտորդների կազմն ու թվաքանակը, ըստ որոշման նախագծի, կմնա անփոփոխ՝ 165 միջազգային ու 44 հայաստանցի աշխատող:

Ըստ Հայաստանում ԵՄ առաքելության՝ այս որոշումը պետք է առաջիկայում հաստատվի նաեւ ԵՄ անդամ երկրների արտգործնախարարների կողմից, ինչը փաստացի ֆորմալ բնույթ է կրում, քանի որ այդ երկրների դեսպաններն այսօր արտահայտել են իրենց կառավարությունների տեսակետը՝ կողմ քվեարկելով նախագծին:

Առաքելության դիտարկման գոտին, ըստ պաշտոնական հաղորդագրության, տարածվում է հայ-ադրբեջանական սահմանի ողջ երկայնքով, ներառյալ Նախիջեւանի հատվածը:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԵԼ Է ՀԱՆՑԱՎՈՐ ԿԵՐՊՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԳՈՒՅՔ

2011-2018 թվականներին ՀՀ պետական գույքի կառավարման վարչության պետ Ա.Ս.-ն, 2011-2019 թվականներին զբաղեցնելով Երեւան քաղաքի հանրակրթական դպրոցի խորհրդի նախագահի պաշտոնը, եղբոր, ինչպես նաեւ այլ անձանց օժանդակությամբ, իշխանական եւ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝ օրինականացրել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով գույք: Այս մասին հայտնում են ՔԿ-ից:

Նախաքննության ընթացքում փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ Ա.Ս.-ն, նպատակ ունենալով դպրոցին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված եւ Պետական գույքի կառավարման վարչությանն ամրացված 15.523 քմ մակերեսով պետական սեփականություն հանդիսացող հողամասից իր եւ իր մերձավորների համար հանցավոր ճանապարհով ձեռք բերել եւ օրինականացնել 1.939,029 քմ մակերեսով հողատարածքներ, Երեւանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց հետ նախապես պայմանավորվել է նշված գույքը, ապօրինի առանձնացնելու եղանակով, դուրս բերել պետության գույքային ֆոնդից եւ մտցնել Երեւանի քաղաքապետարանի գույքային ֆոնդ, այնուհետեւ ակնհայտ հանցավոր ճանապարհով այն դուրս բերել Երեւանի քաղաքապետարանի գույքային ֆոնդից եւ ձեւականորեն մտցնել այլ անձանց գույքային ֆոնդ, որից հետո այն օտարել իրեն եւ իր մերձավորներին՝ այդպիսով առանց խոչընդոտների օրինականացնելով հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը:

Մասնավորապես՝ Ա.Ս.-ն դպրոցի տնօրենին առաջարկել է տարածքը բարեկարգելու պատրվակով կատարել դպրոցի սահմանների ճշտում եւ դրա տարածքից դուրս բերել նախկինում այլ անձանց կողմից ապօրինի կառուցված ավտոտնակները:

Դպրոցի տնօրենը Պետական գույքի կառավարման վարչություն է ներկայացրել Ա.Ս.-ին հասցեագրված դիմում՝ խնդրելով սահմանների ճշտման արդյունքում ավտոտնակները դուրս բերել դպրոցի տարածքից:

Ա.Ս.-ն դիմումն ուղարկել է Երեւանի քաղաքապետին՝ խնդրելով հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը կատարել հիշյալ դպրոցի սահմանների ճշտում եւ միեւնույն ժամանակ Երեւանի քաղաքապետարանի համապատասխան պաշտոնատար անձանց հետ ձեռք է բերել հանցավոր համաձայնություն, որ դպրոցի սահմաններից դուրս բերվի նաեւ ավտոտնակների հետ չկապված, միմյանցից անջատ դպրոցապատկան եւս երկու հողակտոր:

Արդյունքում, կեղծ գրություն-եզրակացությամբ կազմված նախագիծը հաստատվել է Երեւանի քաղաքապետի որոշմամբ եւ թողարկվել է նոր հատակագիծ, համաձայն որի՝ հողամասի փաստացի մակերեսը կազմել է 11.761,57 քմ՝ նախկին գլխավոր հատակագծով սահմանված 15.523 քմ-ի փոխարեն:

Այնուհետեւ, Ա.Ս.-ն իր եւ Երեւանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց հանցավոր գործողությունների արդյունքում պետական սեփականություն հանդիսացող եւ դպրոցին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված 15.523 քմ մակերեսով հողատարածքից անհիմն նվազեցված, պետության գույքային ֆոնդից ապօրինի դուրս բերված եւ Երեւանի քաղաքապետարանի գույքային ֆոնդ մտցված 3.851,43 քմ մակերեսով հողատարածքից 1.939,029 քմ մակերեսով հողամասի հանցավոր ծագումը թաքցնելու նպատակով՝ ձեւական աճուրդների միջոցով կազմակերպել է հիշյալ հողատարածքի եւ դրան միացված հարակից՝ համայնքային սեփականություն հանդիսացող այլ հողատարածքների օտարումն իրեն եւ իր մերձավորներին:

2025 թվականի հունվարի 22-ին հսկող դատախազը հանրային քրեական հետապնդում է հարուցել Ա.Ս.-ի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով (փողերի լվացումը), մեկ անձի նկատմամբ՝ 46-296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով (փողերի լվացմանն օժանդակելը) եւ 46-441-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելուն օժանդակելը), վեց անձի նկատմամբ՝ 46-296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով (փողերի լվացմանն օժանդակելը):

Մեկ անձի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է վարչական հսկողությունը, մեկ անձի նկատմամբ՝ գրավ եւ վարչական հսկողություն, մեկ անձի նկատմամբ՝ տնային կալանք, երկու անձի նկատմամբ՝ գրավ եւ տնային կալանք, երկու անձի նկատմամբ՝ վարչական հսկողություն, մեկ անձի նկատմամբ՝ վարչական հսկողություն եւ չբացակայելու արգելք:

ՀՀ քննչական կոմիտե

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՈՎ Է ՄԵՂԱԴՐՎՈՒՄ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԸ ՀՐԿԻԶԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Կոտայքում հայտնի տեխսպասարկման կետերից մեկը հրկիզելու կասկածանքով օդանավակայանից ձերբակալել են «Հայազն» կուսակցության վարչության անդամ Արմեն Մկրտչյանին:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ չնայած նախաքննական մարմինն ամեն ինչ արել է նրա կալանավորման համար, սակայն դատարանը մերժել է կալանքը խափանման միջոց ընտրելու միջնորդությունը:

Ավելի վաղ SHAMSHYAN.com-ը ֆոտոռեպորտաժ, տեսանյութ էր հրապարակել Կոտայքի մարզում տեղի ունեցած արտակարգ դեպքի մասին, երբ պարզվել էր, որ տեղի ունեցածը ոչ թե անզգուշաբար առաջացած հրդեհ էր, այլ հրկիզում: Հրկիզել էին Կոտայքի մարզում եւ Երեւանում հայտնի տեխսպասարկման կետերից մեկը եւ ժամանած հրշեջ-փրկարարները տեղում հայտարարել էին հրդեհի վտանգավորության «ԲԻՍ 1» աստիճան:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, դեպքի փաստով ՀՀ Ներքին գործերի նախարարության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ոստիկանության Աբովյանի բաժնում գույքի դիտավորյալ ոչնչացման համար փաստաթղթեր էին ձեւակերպվել, որոնք փոխանցվել էին ՀՀ Քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժին, որտեղ դեպքի փաստով նախաձեռնվել էր քրեական վարույթ:

Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ նշված հանցագործությունը բացահայտելու եւ կատարողին կամ կատարողներին հայտնաբերելու համար հսկայածավալ աշխատանքներ էին կատարվել: Նշված անձինք կասկածվում են խոշոր չափի գումարի դիմաց տեխսպասարկման այդ կետը հրկիզելու համար:

ԵՐԳԻՉ ՍԱՐՈ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻՑ ՁՐԿԵԼ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է, որ երգիչ Սարո Թովմասյանին Պարեկային ծառայության աշխատակիցները կանգնեցրել են ու զրկել են վարորդական իրավունքից:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ հայտնի երգիչը այս որոշման համար դիմել է ՀՀ վարչական դատարան ու դատարանով փորձում է վերականգնել իր վարորդական իրավունքի կասեցման հարցը:

Մասնավորապես, հայցը դատարան ներկայացվել է այս տարվա հունվարի 29-ին: Իսկ ահա վարորդական իրավունքից Ներքին գործերի նախարարությունը հայտնի երգչին զրկել է 2024 թվականի հոկտեմբերի 31-ին:

Վարչական դատարանում հայտնի երգչի գործը մակագրվել է դատավոր Ելենա Առաքելյանին:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ «ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ» ՖԻԼՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՒՄ Է ԴԻՄԵԼ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը Գոռ Վարդանյանի «Կայսրության թեւերը» ֆիլմի ձեռքը ընկել է կրակը: Շուրջ 3 ամիս է՝ Գլխավոր դատախազությունը ուսումնասիրում է ԿԳՄՍ նախարարության դիմումը ու այս պահին լրացուցիչ գործողություններ է իրականացնում:

Թե ինչ գործողություններ՝ վերահսկող մարմինը, ի դեմս Գլխավոր դատախազության, չի գաղտնազերծում: Սակայն ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Գլխավոր դատախազությունը դիմել է Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն:

Ասել է թե՝ Գլխավոր դատախազությունը «Կայսրության թեւերը» ֆիլմի շուրջ առաջացած աղմուկի հարցը ցանկանում է թողնել նախարարության ուսերին: Բանն այն է, որ ԲՏԱ նախարարության վերահսկողության տակ են գտնվում հեռուստաընկերությունները, ուստի Գլխավոր դատախազությունը ֆիլմի շուրջ առաջացած աղմուկի հարցը կլուծի նախարարության պատասխանից հետո:

Հիշեցնենք, որ ԿԳՄՍՆ-ն ավելի վաղ հայտնել էր, որ նախարարությունը մասնագիտական վերլուծություն է իրականացրել Գոռ Վարդանյանի «Կայսրության թեւեր» ֆիլմի վերաբերյալ եւ դիմել Դատախազություն:

Ըստ «Մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացության՝ ֆիլմի դիտումը կարող է հանգեցնել այնպիսի բացասական վարքային դրսեւորումների ընդօրինակման, ինչպիսիք են անչափահասների կողմից ծխախոտի օգտագործումը, միմյանց հանդեպ անհարգալից վերաբերմունքը, բացասական վարքի տարաբնույթ դրսեւորումները եւ այլն:

ԿԳՄՍ նախարարությունը խիստ մտահոգիչ եւ անընդունելի է համարում նման՝ քրեական ենթամշակույթի տարրեր պարունակող ֆիլմում անչափահասների ներգրավվածությունը եւ մասնակցությունը»,- ասված է ԿԳՄՍՆ-ի տարածած հայտարարության մեջ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 29-ից 30-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 129 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՔՊ-ԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՑԱԾՐ ԳՆԵՐՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍ Է ԾԱԽԵԼ

Նիկոլ Փաշինյանի իշխանության բարձրաստիճան պաշտոնյան Դիլիջան քաղաքում արդեն երկրորդ օբյեկտն է կառուցում: Տավուշի մարզի բարձրաստիճան պաշտոնյայի բարեկամը հողամաս է գնել Դիլիջանում: Երբ Դիլիջանի բնակիչները դիմում են համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին, որպեսզի կառուցապատման նպատակով իրենց հող օտարի, համայնքի ղեկավարը մերժում է՝ ասելով, որ Դիլիջանում ազատ հողեր չկան: Սակայն Երեւան քաղաքի բնակիչների համար Դիլիջանում հողեր կան: Բանը հասել է նրան, որ Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանը Երեւանի բնակչին մի օրում շուկայականից շատ ցածր գներով միանգամից երկու հողամաս է վաճառել: Դավիթ Սարգսյանի՝ 2024թ. դեկտեմբերի 19-ի թիվ 1332-Ա որոշմամբ 2025թ. հունվարի 20-ին աճուրդի է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 131.1քմ հողամաս (Լոտ-106 (ՔՀ-24)), Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց, թիվ 1/2 հասցեում, հասարակական կառուցապատման նպատակով, 917700 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 917700 դրամ առավելագույն գնով հաղթել է Երեւան քաղաքի Գեւորգյան փողոց, 74 շենք, թիվ 12 բնակարանի բնակիչ Արթուր Խաչատրյանը: Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը հունվարի 23-ին որոշել է 131.1քմ մակերեսով հողամասը հասարակական կառուցապատման նպատակով 917700 դրամով օտարել Երեւանի բնակիչ Արթուր Խաչատրյանին: Նույն օրը՝ հունվարի 23-ին, Դավիթ Սարգսյանը որոշել է Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց, թիվ 1/3 հասցեի 240.8քմ մակերեսով հողամասը հասարակական կառուցապատման նպատակով , 1685600 դրամով օտարել Երեւանի բնակիչ նույն Արթուր Խաչատրյանին: Հավելենք, որ Դիլիջանի համայնքապետ Դավիթ Սարգսյանը, 2024 թվականի մայիսի 2-ին թիվ 538-Ա որոշմամբ, 2024թ. հունիսի 3-ին աճուրդի է ներկայացրել Դիլիջան համայնքի 1650 քմ հողամասը շուկայական արժեքից ցածր՝ 11 մլն 500 հազար դրամ մեկնարկային գնով: Աճուրդին նույն՝ մեկնարկային գնով հաղթել է համայնքի ղեկավարի եղբայրը՝ Սասուն Սարգսյանը: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը քննության է առել հոդվածը, որի ընթացքում առկա է եղել վարչական իրավախախտում՝ 169.31-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերեւույթ խախտման կապակցությամբ: 2024 թվականի նոյեմբերի 18-ին հանձնաժողովը որոշել է Դավիթ Սարգսյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ սահմանված աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ 300 հազար դրամի չափով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԴՊՐՈՑ (ՔԴԵԴ)

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԵՐ

Եվրոպայի խորհրդի Քաղաքական դասընթացների երեւանյան դպրոցը (ՔԴԵԴ) ընդունում է հայտեր 2025 ուսումնական տարվա ընթացքում Հայաստանում կազմակերպվելիք միջոցառումներին (սեմինարներ, քննարկումներ, հանդիպումներ եւ այլն) մասնակցելու համար:

➢ ՔԴԵԴ-ի միջավայրն ինտելեկտուալ է,

➢ քննարկումներն ամենաակտուալ քաղաքական, տնտեսական, ռեգիոնալ, աշխարհաքաղաքական, քաղաքակրթական եւ այլ թեմաների վերաբերյալ են,

➢ ՔԴԵԴ-ում սովորում են տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչներ՝ քաղաքագետներ, տնտեսագետներ, իրավաբաններ, վերլուծաբաններ, լրագրողներ եւ այլն,

➢ ՔԴԵԴ-ում բանախոսում են հանրապետության լավագույն էքսպերտները, օտարերկրյա փորձագետներ, դեսպաններ,

➢ ստեղծվում են ՔԴԵԴ-ական ցանցային կապեր մասնակիցների, շրջանավարտների եւ դասախոսների միջեւ:

Եվս մեկ միջոցառում նախատեսվում է Ստրասբուրգում (Ֆրանսիա), որի մասնակիցների ընտրության պայմանների մասին կհայտարարվի լրացուցիչ:

Ստրասբուրգյան սեմինարներին դասախոսություններով հանդես են գալիս պետությունների, միջազգային կազմակերպությունների ղեկավարներ, եվրոպական երկրների կառավարությունների ղեկավարներ եւ անդամներ, Նոբելյան մրցանակի դափնեկիրներ, եվրոպական առաջատար համալսարանների դասախոսներ եւ այլք:

ՔԴԵԴ-ը Քաղաքական դասընթացների դպրոցների Եվրոպական ասոցիացիայի լիիրավ անդամ է, քաղաքականապես՝ չեզոք, չի հարում քաղաքական որեւէ հոսանքի, կուսակցության, խմբի կամ անհատի:

ՔԴԵԴ-ը Հայաստանում ստեղծված առաջին քաղաքական դպրոցն է եւ գործում է շուրջ երկու տասնամյակ:

ՔԴԵԴ-ի նպատակն է օժանդակել երիտասարդության քաղաքագիտական իմացությունների ընդլայնմանը եւ ժողովրդավարական մշակույթի խորացմանը՝ եվրոպական ստանդարտներին համապատասխան:

ՔԴԵԴ-ի շրջանավարտ են խորհրդարանի տարբեր գումարումների պատգամավորներ, նախարարներ, դատավորներ, փոխնախարարներ, ավագանիների անդամներ, նախագահի, կառավարության, ԱԺ աշխատակազմերում, նախարարություններում եւ նրանց ստորաբաժանումներում, կուսակցություններում, հասարակական կազմակերպություններում, դատաիրավական համակարգում, բիզնեսում պատասխանատու դիրքեր զբաղեցնողներ, միջազգային կազմակերպությունների աշխատակիցներ, ինչպես նաեւ լրագրողներ, վերլուծաբաններ, քաղաքագիտության ոլորտի մասնագետներ եւ այլք:

➢ Քննարկումները բազմաթեմատիկ են ու բազմաբովանդակ,

➢ մթնոլորտը բարյացակամ է ու առողջ,

➢ յուրաքանչյուրն ազատ է իր տեսակետների մեջ, անկաշկանդ մասնակցում է քննարկումներին,

➢ հայաստանյան դասընթացը բարեհաջող ավարտածներին կտրվի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի ստորագրությամբ ավարտական վկայական,

➢ հայաստանյան դասընթացը բարեհաջող ավարտածները հնարավորություն ունեն դիմելու ստրասբուրգյան սեմինարին մասնակցելու համար:

ՔԴԵԴ կարող են դիմել խորհրդարանի, ավագանիների անդամները, նախագահի, կառավարության եւ ԱԺ աշխատակազմերում, նախարարություններում եւ նրանց ստորաբաժանումներում, հասարակական կազմակերպություններում, դատաիրավական համակարգում, տարածքային եւ տեղական կառավարման մարմիններում, բիզնեսում եւ տնտեսվարող սուբյեկտներում, ԱԺ-ում ներկայացված կուսակցություններում պատասխանատու դիրքեր զբաղեցնողները, քաղծառայողները, միջազգային կազմակերպությունների աշխատակիցները, կրթության ոլորտի ներկայացուցիչները, ինչպես նաեւ լրագրողները, վերլուծաբանները, քաղաքագիտության ոլորտի մասնագետները եւ այլք:

Հայտատուն պետք է՝

1. լինի 23-ից մինչեւ 40 տարեկան (ընտրվելիք մասնակիցների մինչեւ 20 տոկոսի չափով բացառություն կարվի մինչեւ 45 տարեկանների համար):

2. ունենա երկու տարուց ոչ պակաս (2023-2024թթ. ներառյալ) մասնագիտական աշխատանքային ստաժ: Ուսումնառության, զինվորական ծառայության, կամավորական աշխատանքի ժամանակահատվածը չի համարվելու մասնագիտական ստաժ,

3. աշխատելիս լինի,

4. լինի Եվրոպայի խորհրդի որեւէ անդամ-պետության լիիրավ քաղաքացի:

Անգլերենի կամ ֆրանսերենի իմացությունը նախընտրելի է:

Քաղաքական դասընթացների երեւանյան դպրոցի կազմակերպելիք միջոցառումներին մասնակցել ցանկացողները պետք է պարտադիր ներկայացնեն.

1. դիմում-հարցաթերթիկ (հատուկ ձեւ), որի բոլոր կետերը ենթակա են պարտադիր լրացման,

2. մեկ լուսանկար (փակցնել դիմում-հարցաթերթիկին),

3. անձը հաստատող փաստաթուղթ (անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն),

4. ինքնակենսագրություն (CV):

Ըստ անհատական դեպքի, կարող են պահանջվել այլ փաստաթղթեր եւս:

Վերոնշյալ պայմաններին չհամապատասխանող անձանց համար, ովքեր հետաքրքրված են ՔԴԵԴ ծրագրով, կկազմակերպվի առանձին ընդունելություն՝ այլ պայմաններով:

Նախնական մրցույթի փուլը (փաստաթղթերի ուսումնասիրություն) հաղթահարած թեկնածուներին կտրվի քննություններին մասնակցելու հնարավորություն:

Քննական գործընթացը բարեհաջող հաղթահարածները ՔԴԵԴ-ի մասնակցի կարգավիճակ ստանալու համար ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ ներկայացնում են նաեւ՝

հավաստագիր (հատուկ ձեւ),

տեղեկանք աշխատավայրից (հատուկ ձեւ)՝ պարտադիր ստորագրված ու կնքված:

ՔԴԵԴ-ի հայաստանյան միջոցառումները կազմակերպվում են ինչպես Երեւանում, այնպես էլ մայրաքաղաքից դուրս՝ գիշերակացով: Հայաստանյան ուսումնական ցիկլին մասնակցելու վճարը 50 000 ՀՀ դրամ է:

Միջոցառումների հայաստանյան փուլը բարեհաջող ավարտողները կարող են դիմել ստրասբուրգյան սեմինարին մասնակցելու համար: Դիմումները քննության կառնվեն ըստ Եվրոպայի խորհրդի սահմանած պայմանների եւ քվոտաների: Ընտրված հայտատուները կայցելեն Եվրոպայի խորհուրդ, Եվրոպական պառլամենտ, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, կստանան այնտեղ ելույթ ունենալու հնարավորություն:

Որեւէ փուլում իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն ներկայացրածները կզրկվեն ՔԴԵԴ-ի աշխատանքներին մասնակցելու հնարավորությունից՝ դրանք ի հայտ գալուն պես:

Փաստաթղթային փաթեթը կարելի է ներկայացնել եւ էլեկտրոնային տարբերակով, եւ առձեռն:

1. Էլեկտրոնային տարբերակ՝ հայտերն ընդունվում են հունվարի 10-ից մինչեւ փետրվարի 7-ը: Փաստաթղթային փաթեթն ուղարկել մեկ նամակով ysps_ysps@yahoo.com էլ. հասցեին: Վերնագրում նշել՝ «2025 հայտ - անուն ազգանուն»: Երեք աշխատանքային օրվա ընթացքում պատասխան նամակ չստանալու դեպքում՝ խնդրում ենք կապ հաստատել դպրոցի տնօրինության հետ:

2. Առձեռն տարբերակ՝ հայտերն ընդունվում են հունվարի 29-ին, 31-ին եւ փետրվարի 7-ին՝ ժամը 13:00-ից 15:30-ը: Հասցե՝ Խորենացու պող. 33, «Տաշիր» կենտրոնի 6-րդ՝ գրասենյակային հարկ, 31-րդ սենյակ:

ՔԴԵԴ հանձնված փաստաթղթերը չեն պատճենահանվում եւ չեն վերադարձվում:

Հեռախոս՝ 094 293903 (հարցերի դեպքում զանգահարել աշխատանքային օրերին՝ ժամը 14:00-16:00-ն)

Կայք՝ www.ysps.am.

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 9 պատահար. 13 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Team-Ը՝ ՁՄԵՌԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԽԱՂԵՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐ

Ջերմուկը պատրաստվում է հյուրընկալել համահայկական ամենամասշտաբային սպորտային իրադարձության՝ Համահայկական ձմեռային երկրորդ խաղերի ավելի քան 1300 մարզիկներին աշխարհի 19 երկրից:

Թիմային սպորտաձեւերի զարգացմանն ու հայանպաստ ծրագրերի իրականացմանն աջակցելու նպատակով Team Telecom Armenia-ն արդեն երկրորդ անգամ միացել է այս նախաձեռնությանը՝որպես հովանավոր:

«Համահայկական ձմեռային խաղերին աջակցությունը մեզ համար ավելին է, քան պարզապես գործընկերությունը: Սպորտի միջոցով մենք ստեղծում ենք կամուրջ՝նպաստելով Հայաստանի ու սփյուռքի հազարավոր հայերի համախմբմանը, նոր կապերի ստեղծմանն ու համագործակցությանը»,-նշում է ընկերության գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը:

Մրցաշարները անցկացվելու են փետրվարի 1-ից 7-ը: Լավագույնի կոչմանն արժանանալու համար մարզիկները պայքարելու են հոկեյի, դահուկավազքի, լեռնադահուկային սպորտի ու սնոուբորդի, շախմատի, ինչպես նաեւ սպորտային պարերի եւ ձնամարտի մարզաձեւերում:

Համահայկական խաղերն անցկացվում են օլիմպիական սկզբունքով՝ 4 տարին մեկ անգամ: Առաջին անգամ Համահայկական խաղերն անցկացվել են 1999 թվականին՝ Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման նպատակով:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի, Կառավարության 03.08.2023թ. N1332-Ն եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն որոշումների պահանջների համաձայն՝ մշակվում է Կոտայքի մարզի Ձրվեժ համայնքի Ձորաղբյուր համայնքի վարչական տարածքում Հասմիկ Շահբազյանի կողմից գյուղատնտեսական /ոռոգում՝ 1.0 հա/ նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 1.2 լ/վ ջրաքանակով ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթերի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթերի նախագծերի նախնական տարբերակներին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից 18:00-ն, դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթերի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթերի քննարկումը տեղի կունենա 2025 թվականի փետրվարի 4-ին՝ ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակում:

Շրջակա միջավայրի նախարարություն

Yandex Armenia. «ՕԳՆԵՆՔ ՄԻԱՍԻՆ» Գ

ԻՆՉՊԵՍ ԱՆՑԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՇԱՎԻ 6 ԱՄԻՍՆԵՐԸ

2024 թ. հունիս-դեկտեմբեր ամիսներին «Օգնենք միասին» բարեգործական նախաձեռնության մասնակից է դարձել ավելի քան 6800 մարդ, որոնց շնորհիվ հավաքվել է շուրջ 11,89 միլիոն դրամ՝ ներառյալ Yandex Go-ի ներդրումը: Միայն տարեվերջին՝ հոկտեմբեր, նոյեմբեր եւ դեկտեմբեր ամիսներին, հավաքագրվել է 3,80 մլն դրամ, որին գումարվել է Yandex Go-ի նվիրատվությունը՝ դառնալով 6,36 մլն դրամ: Նվիրաբերված միջոցներն ուղղվել են չորս բարեգործական կազմակերպությունների կարիքներին՝ «Սիթի օֆ Սմայլ», «ՎԻՎԱ», «Շտապիր դեպի բարին» եւ «Հայ մայրեր»:



«Մասնակցությունը նախագծին օգնում է մեզ օպերատիվ կերպով արձագանքել ծանր հիվանդություններով երեխաների կարիքներին եւ նրանց որակյալ խնամք տրամադրել: Մենք միջոցներն ուղղել ենք աուտիզմով երեխաների կենտրոնի զարգացմանը եւ շահառուի կարեւորագույն գենետիկ անալիզի անցկացմանը», - ասում է «Շտապիր դեպի բարին» հիմնադրամի տնօրեն Ելենա Հակոբյանը՝ ընդգծելով, որ հետագայում շարունակելու են զարգացնել «Առողջ ապագա» ծրագիրը, որը կօգնի ավելի շատ երեխաների օգնել:

2024 թվականի հունիսից Հայաստանում Yandex Go հավելվածի օգտատերերը հնարավորություն ստացան տաքսի պատվիրելիս նվիրատվություն կատարել՝ 10, 30, 50, 100 կամ 500 դրամ: Դեկտեմբերին «Օգնենք միասին» կոճակը հասանելի դարձավ նաեւ առաքման ծառայությունում:

Yandex Go-ն ամեն ամիս իր կողմից լրացուցիչ գումարով համալրում է հավաքված միջոցները, ինչպես նաեւ հոգում վճարային օպերատորների միջնորդավճարը, ինչի արդյունքում նվիրատվությունների 100%-ն ուղղվում է բարեգործությանը:

«Նախագիծը մեզ օգնեց «Երազի տանը» սոնսորային սենյակ ստեղծել, որտեղ մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաները վերականգնողական բուժում են ստանում: Միջոցներն ուղղվել են նաեւ շահառուների անվճար թերապիաներին: Այժմ նախատեսում ենք անապահով ընտանիքներում ապրող հաշմանդամություն ունեցող երեխաների մայրերի համար մատնահարդարման եւ կարի ուսուցման նախագիծ իրականացնել»,- պատմում է «Հայ մայրեր» ՀԿ նախագահ Նարինե Մանուկյանը՝ շեշտելով, որ այդպես նրանք մասնագիտություն ձեռք կբերեն, կդառնան անկախ եւ եկամուտ կապահովեն ընտանիքի համար:

Yandex Go-ի օգտատերերի նվիրատվությունների շնորհիվ «ՎԻՎԱ» հիմնադրամը կարողացել է մարզերում արեւային ջրատաքացուցիչներ տեղադրել արցախցի 6 փախստական ընտանիքների համար՝ ապահովելով մշտական հասանելիություն տաք ջրին:

«Մենք պլանավորում ենք շարունակել աջակցել արցախցի անապահով եւ բազմազավակ ընտանիքներին, որոնք հայտնվել են բարդ կենցաղային պայմաններում Հայաստանի մարզերում: Սպասման ցուցակում արդեն ավելի քան 100 ընտանիք կա, որոնց նույնպես անհրաժեշտ է օգնել»,- ասում է «ՎԻՎԱ» հիմնադրամի տնօրեն եւ համահիմնադիր Տատյանա Հովհաննիսյանը:

«Սիթի օֆ Սմայլ» հիմնադրամն էլ հավաքագրված գումարն ուղղել է քաղցկեղ եւ արյան հիվանդություններ ունեցող 5 շահառուների բուժմանը:

«Բուժումը ներառում է լաբորատոր հետազոտությունների անցկացում, կենսականորեն անհրաժեշտ դեղամիջոցների ձեռքբերում, տարատեսակ պրոցեդուրաների եւ հոգեբանական աջակցության տրամադրում: Մենք շարունակելու ենք մասնակցել նախագծին եւ ամբողջությամբ հոգալ մինչեւ 25 տարեկան յուրաքանչյուր երեխայի եւ երիտասարդի բուժման ծախսերը՝ ապահովելով ապաքինման հավասար հնարավորություններ»,- ընդգծում է «Սիթի օֆ Սմայլ» հիմնադրամի տնօրեն Էսթեր Դեմիրճյանը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ Գ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այսուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերն ըստ ներկայացված հերթականության՝

- Կոտայքի մարզ, համայնք Ձրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Ազատության փողոց, 56 հասցեում գտնվող 324,92 ք.մ. բնակելի տուն, 3,12 քմ կաթսայատուն, 3,38 քմ հավաբուն, 43,64 քմ անասնաշենք, 24,86 քմ ավտոտնակ, 10գ54 քմ թոնրատուն, 20,34 քմ շինություն, 26,16 քմ /39,24 խմ/ պարիսպ եւ 0,15 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 67600000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք., 4-րդ թաղամաս, 10 շենք, 63 հասցեում գտնվող 63 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 18600000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր ք., Բաղրամյան փողոց, 23/1 շենք, 22 հասցեում գտնվող 62,1 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 16800000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին ք., Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոց, 89 հասցեում գտնվող 163,4 ք.մ. բնակելի տուն, 10,1 քմ խոհանոց, 5,3 քմ սանհանգույց, 15,6 քմ մառան, 9,2 քմ ծածկ եւ 0,036 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 40850000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Ավան, Ավան-Առինջ թաղամաս, 2-րդ միկրոշրջան, 2/5 շենք, 27 հասցեում գտնվող 73,45 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 34600000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Քաջարան, Քաջարան ք., Խգ Աբովյան փողոց, 11 շենք, 32,33 հասցեում գտնվող 94,5 ք.մ. բնակարան եւ 3,0 քմ ինքնակամ կցակառույց: Լոտի մեկնարկային գինը՝ 22600000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, Պգ Տիչինայի փողոց, 320/30 հասցեում գտնվող 114,72 քմ թիվ 14 նախագծային բնակարան /գրավի առարկա է հանդիսանում 114,72 քմ մակերեսով բնակարանի գնման իրավունքի գրավը/: Լոտի մեկնարկային գինը՝ 52200000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան ք., Երեւանյան փողոց, 6 շենք, 1 հասցեում գտնվող 56,78 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11800000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան ք., Կենտրոն թաղամաս, 9 շենք, 27 հասցեում գտնվող 78,35 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15300000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, Սիլիկյան թաղամասի 8-րդ փողոց, 1 հասցեում գտնվող 286 ք.մ. բնակելի տուն, 69,2 քմ ինքնակամ շինություններ եւ 0,04486 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝49000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Շիրակի փողոց, 2-րդ նրբանցք, 8 շենք, 2 հասցեում գտնվող 80,13 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝32060000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, 16-րդ թաղամաս, 44 շենք, 134 հասցեում գտնվող 75,2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝31600000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Մայակ թաղամաս, 3 շենք, 26 հասցեում գտնվող 76,74 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝35500000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Շիրակի փողոց, 2-րդ նրբանցք, 3 շենք, 21 հասցեում գտնվող 83,8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝31500000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Վ. Թոթովենցի փողոց, 1 շենք, 20 հասցեում գտնվող 101,8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝44800000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին ք., Արագածի զանգված, 3 շենք, 10 հասցեում գտնվող 60,6 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 20700000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Առինջ, Մաշտոցի փողոց, թիվ 20 հասցեում գտնվող 264,1 ք.մ. բնակելի տուն, 1,9 քմ զուգարան, 4,2 քմ կաթսայատան եւ 0,03 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝54000000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Այնթապ, 2-րդ շարք, 79 հասցեում գտնվող 181.3 ք.մ. բնակելի տուն, 6.3 ք.մ. լողարան, 1.7 ք.մ. կաթսայատուն եւ 0.0414 հա հողամաս:

Լոտի մեկնարկային գինը՝29850000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 17.02.2025թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝20.03.2025թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքերը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԻՇԱՉԱՐ, ԲԱՅՑ ՉԱՆԱՍԵՐ ԼՈՒԻՆ

Ի՞ՆՉ Է ԱՇԽԱՏԵԼ ԴԸ ՖՅՈՒՆԵՍԸ ՄԻՆՉԵՎ ԴԵՐԱՍԱՆ ԴԱՌՆԱԼԸ

Ֆրանսիական մշակույթը հարուստ է այնպիսի դեմքերով, ինչպիսիք են Պիեռ Ռիշարը, Մարիոն Կոտիյարը, Ֆրեդերիկ Դիֆենսան, Ժերար Դեպարդիեն, Լուի դը Ֆյունեսը եւ այլք:



«Ժողովուրդ» օրաթերթն այսօր անդրադառնալու է հանրահայտ եւ սիրված ֆրանսիացի դերասան Լուի դը Ֆյունեսին:

«Ժողովուրդ» օրաթերթը իր ընթերցողներին է ներկայացնում դերասանի կյանքից հետաքրքիր դեպքեր:

Լուի դը Ֆյունեսը, կարելի է ասել, որ բազմակողմանի զարգացած էր: Մանուկ հասակում նա իր ընկերներին հայտնի էր որպես «Ֆյուֆյու»: Նա խոսում էր ֆրանսերեն, իսպաներեն եւ անգլերեն: Երիտասարդ ժամանակ զբաղվում էր նկարչությամբ եւ դաշնամուր էր նվագում: Չնայած նշված հանգամանքներին՝ Լուին դպրոցում վատ էր սովորում, սակայն հոյակապ կերպով նմանակում էր ուսուցիչներին: Դերասանական հմտությունները Լուիի մոտ նկատվել են դեռ վաղ տարիքից:

Լուի դը Ֆյունեսը ուներ բավականին անհանդուրժող բնավորություն: Այդ մասին փաստում է նաեւ այն հանգամանքը, որ որտեղ աշխատել է նա, կարճ ընթացք է ունեցել այդ փորձառությունը: Օրինակ, երբ դը Ֆյունեսը աշխատել է կարի արհեստանոցում, նրան հեռացրել են այն բանի համար, որ գնդասեղները նետել էր դեղձանիկի վրա, իսկ ֆոտոատելյեից վռնդել են այն բանի համար, որ սեղանի արկղի մեջ է նետել ճայթուցիկ, որի հետեւանքով առաջացել է հրդեհ: Երիտասարդ Լուիին հեռացրել են նաեւ գլխարկների սրահում աշխատանքից, այն պատճառով, որ ղեկավարի դեմքին ջուր է լցրել:

Կինոռեժիսորները դը Ֆյունեսին ծաղրածու էին համարում եւ լուրջ դերեր չէին առաջարկում տեւական ժամանակ: Դերասանը հաջողության հասել է 40 տարեկանում: Մինչ իր հանրաճանաչությունը Լուի դը Ֆյունեսը աշխատել է կոշիկ մաքրող, ցուցափեղկերի զարդարիչ, թիթեղագործ, շրջիկ գործակատար: Նրա աշխատասիրությունը վկայում է այն մասին, որ երբեք չպետք է հետ կանգնել նպատակներից եւ երազանքներից, երբեք չպետք է կիսատ թողնել ձեռնարկածը:

Դերասանը չի ունեցել նյութական անապահովություն, սակայն մանրակրկիտ կերպով հաշվարկել է իր ամեն մի ծախսը: Դը Ֆյունեսը այնքան կարող էր մնալ շուկայում, գնի համար «բանավիճել» վաճառողների հետ, որ ապրանքը իրեն անվճար տրամադրեին եւ այդպիսով էլ խնայեր գումար: Իր մտերիմներին Լուին կարող էր հոգնեցնել, ձանձրացնել եւ բարկացնել իր ժլատությամբ, անդադար փնթփնթոցներով:

Ասում են՝ դերասանը նաեւ հիշաչար էր: Մի անգամ նա մերժել է Գրեյս Քելլիի առաջարկը՝ խաղալ բարեգործական ներկայացմանը, քանի որ Գրեյսը մի օր նկարահանման հրապարակի մոտով մեքենայով անցնելիս, որտեղ Լուի դը Ֆյունեսն էր, չի կանգնել, որ բարեւի նրան:

Լուի դը Ֆյունեսի բնավորությունը ապշեցուցիչ էր, եւ լրագրողները ասում էին. «Դժվար է պատկերացնել, որ այդ փոքրամարմին, շատ լուրջ մարդը կարողանում է զվարճացնել ամբողջ Ֆրանսիան»:

Դը Ֆյունեսը առանձնացել է նաեւ իր յուրահատուկ եւ հետաքրքիր մտքերով:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է դրանցից մի քանիսը:

- Լավ երաժշտության ներքո ավելի հեշտ է էլեգանտ տղամարդ ձեւանալը:
- Եթե բաճկոնիդ վրա մի փոքր փոշի կա, մարդիկ հենց դա էլ նկատում են:
- Լավ կատակերգու դառնալու համար չպետք է ջանալ ծիծաղեցնել, պետք է անկեղծ խաղալ, պետք է հրաժարվել կատակներից, դրանք երբեք չեն օգնում դերասանին:
- Սիրում եմ զբոսնել գերեզմանոցում, այնտեղ գոնե հանդիպում ես լռակյաց մարդկանց:

Լուի դը Ֆյունեսն իր ամբողջ կյանքի ընթացքում նկարահանվել է 100-ից ավելի ֆիլմերում:

Իր ջանասիրության եւ միգուցե ինչ-որ չափով տարօրինակ մտածելակերպի շնորհիվ էլ գերել է շատ կինոսերների սրտերը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

«ԿՈՉ ԵՆՔ ԱՆՈՒՄ ՉԳՆԵԼ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՓԱԹԵԹՆԵՐ»

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՄԻԱՑԵԼ ԵՆ ԲՈՅԿՈՏԻՆ

Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության քարտուղար Սամվել Հարոյանը փեյսբուքյան իր էջում տեղադրել է թանկացումներին դեմ հանդես եկող մշակութային գործիչների հայտարարությունը.

«Հարգելի՛ հայրենակիցներ,

Հայաստանի իշխանությունների կայացրած որոշումների հետեւանքով սոցիալական լուրջ խնդիրներ են առաջացել ՀՀ քաղաքացիների համար: Կտրուկ աճել է գույքահարկը, կրկնակի բարձրացել է շրջանառության հարկի չափը, մինչեւ 300 դրամ թանկացնում են Երեւանի քաղաքային տրանսպորտը, մայրաքաղաքում ավելացել է աղբահանության վճարը, չնայած դատարանի կայացրած վճռին՝ կարմիր կետագծերով ավտոկայանատեղիների գները շարունակում են բարձր մնալ, մարդկանց ստիպում են եկամուտներ հայտարարագրել, ինչը լրացուցիչ ֆինանսական բեռ է եւ անընդունելի: Եթե այս ամենին ավելացնենք նաեւ այն, որ առաջին անհրաժեշտության ապրանքները թանկ են եւ հասանելի չեն ՀՀ քաղաքացիներից շատերին, ապա պատկերն ամբողջական կդառնա:

Մենք՝ ներքոստորագրյալներս, կոչ ենք անում միասնաբար պայքարել այս հակասոցիալական որոշումների դեմ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է քաղաքային տրանսպորտին: Պետք է փետրվարի 1-ից բոյկոտել քաղաքային տրանսպորտի թանկացման որոշումը՝ չգնելով թանկարժեք փաթեթները եւ չվճարելով ուղեվարձի վճարն այնքան ժամանակ, քանի դեռ չի վերանայվել թանկացման որոշումը:

1. Մարտին Վարդազարյան- կոմպոզիտոր, ՀՀ ժողովրդական արտիստ, Երեւանի պատվավոր քաղաքացի
2. Երվանդ Երզնկյան - կոմպոզիտոր, ՀՀ ժողովրդական արտիստ,Երեւանի պատվավոր քաղաքացի
3. Սամվել Գալստյան - երգիչ, երգահան, կոնսերվատորիայի պրոֆեսոր
4. Արթուր Սահակյան - բեմադրիչ, «Գոյ» թատրոնի գեղարվեստական ղեկավար
5. Սիրվարդ Համբարյան - կրթության ոլորտի փորձագետ
6. Կարո Վարդանյան - գրականագետ, արվեստի վաստակավոր գործիչ
7. Սամվել Թադեւոսյան - կինոռեժիսոր, ՀՀ Կինոգործիչների միության անդամ
8. Արսեն Համբարյան - երգիչ, երգահան, գրող
9. Աննա Մայիլյան - երգչուհի, ՀՀ վաստակավոր արտիստ
10. Ժիրայր Դադասյան - ռեժիսոր, արվեստի վաստակավոր գործիչ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՁՄԵՌԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԽԱՂԵՐ

Ջերմուկում փետրվարի 1-7-ը կանցկացվեն Համահայկական ձմեռային երկրորդ խաղերը, որոնց աշխարհի 19 պետության 77 քաղաքի ավելի քան 1300 պատվիրակ կմասնակցի:

Հատկանշական է՝ Համահայկական ձմեռային առաջին խաղերը տեղի են ունեցել 2014 թվականին Ծաղկաձորում, որոնց մասնակցել է շուրջ 430 պատվիրակ՝ աշխարհի 11 պետության 22 քաղաքից:

Համահայկական ձմեռային երկրորդ խաղերը կանցկացվեն հոկեյ, դահուկավազք, լեռնադահուկային սպորտ, սնոուբորդ, շախմատ, ձնամարտ եւ սպորտային պարեր մարզաձեւերից:

Խաղերի բացման հանդիսավոր արարողությունը կկայանա Ջերմուկում փետրվարի 1-ին՝ ժամը 18:00-ին:

Համահայկական ձմեռային երկրորդ խաղերի ջահը վառվել էր Նորավանքում: Տիտղոսակիր մարզիկները ջահով ուղեւորվել էին Ջերմուկ:

ԹԵՆԻՍԸ ՀԱՂԹԱՆԱԿՈՎ Է ՄԵԿՆԱՐԿԵԼ

Հայաստանը ներկայացնող պրոֆեսիոնալ թենիսիստ Էլինա Ավանեսյանը հաղթանակով է մեկնարկել Լինցի WTA մրցաշարում:

Ավստրիայում մեկնարկած մրցաշարի անդրանիկ փուլում Էլինա Ավանեսյանի մրցակիցն աշխարհի 53-րդ ռակետ չեխ Կատերինա Սինիակովան էր: Մեկ ժամից ավել ու երկու սեթ ձգված մրցախաղն ավարտվեց Ավանեսյանի հաղթանակով՝ 6:3, 6:2 հաշվով:

Էլինա Ավանեսյանը 2024 թվականի օգոստոսից հանդես է գալիս Հայաստանի դրոշի ներքո: Ավանեսյանը դասակարգման աղյուսակում լավագույն արդյունքով եղել է 41-րդ տեղում:

ՖՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՔԱՐԿ. ՀՖՖ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան նոր ձեւաչափ է ներկայացրել Պրեմիեր լիգայի անցկացման վերաբերյալ:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան առաջարկում է Հայաստանի Պրեմիեր լիգայի անցկացման ձեւաչափում կատարել փոփոխություններ: Հայաստանի Պրեմիեր լիգայում եւ Առաջին խմբում հանդես եկող ակումբներին առաջարկվում է քննարկել նոր ձեւաչափը եւ իրենց առաջարկությունները ներկայացնել ՀՖՖ մինչեւ ս. թ. փետրվարի 20-ը, որից հետո արդյունքները կամփոփվեն եւ կներկայացվեն ՀՖՖ Գործադիր կոմիտեին:

ՀՖՖ-ն ակնկալում է, որ Հայաստանի Պրեմիեր լիգան կազմակերպչական առումով դառնում է կայուն, կանխատեսելի առաջնություն: Մասնակից թիմերը հնարավորություն կստանան իրենց ակումբների ռազմավարությունը կառուցել առնվազն 3 տարվա կտրվածքով՝ չզգուշանալով հնարավոր փոփոխություններից:

● *Փետրվարի 7-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Տղաները չափն անցնում են» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ով իրավունք ունի ստանալու սոցիալական նպաստ, եւ ինչպես է հաշվարկվում ընտանեկան նպաստի չափը:

Հայկանուշ Մովսիսյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ սոցիալական նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, մինչեւ 18 տարեկան անդամ չունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է ՀՀ կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված սոցիալական նպաստի իրավունք տվող սահմանային միավորից: Միաժամանակ հայտնում ենք, որ նպաստի չափը հաշվարկվում է՝ ընտանեկան նպաստի բազային մասին ավելացնելով ընտանիքի կազմում գտնվող եւ ընտանիքի բնակության վայրում փաստացի բնակվող, 18 տարին չլրացած յուրաքանչյուր անդամի համար տրվող հավելումը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նկատենք, որ ընտանեկան նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, մինչեւ 18 տարեկան անդամ ունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է ՀՀ կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված ընտանեկան նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային միավորից:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչ կարգով է իրականացվում ամուսնալուծությունը եւ դրա պետական գրանցումը:

Նելլի Մկրտումյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ ամուսնալուծության պետական գրանցման հիմքերն են՝

1. ամուսինների համատեղ դիմումը՝ փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծության պետական գրանցում կատարելու համար,
2. ամուսիններից մեկի դիմումը, եթե մյուսին դատարանը ճանաչել է անհայտ բացակայող կամ անգործունակ, կամ մյուսը դատարանի դատավճռով դատապարտվել է ազատազրկման,
3. ամուսիններից մեկի դիմումը եւ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով ամուսնալուծություն կատարելու դեպքում:

Ամուսնալուծության պետական գրանցման դիմում կարող է ներկայացվել, եթե՝

1) ամուսնությունը, որը լուծվում է, գրանցվել է Հայաստանի Հանրապետության ՔԿԱԳ մարմիններում կամ Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներում,

2) ամուսնությունը, որը լուծվում է, գրանցել է օտարերկրյա պետությունը, եւ Հայաստանի Հանրապետությունն իրավասու է լուծելու այդ ամուսնությունը երկկողմ կամ բազմակողմ միջազգային պայմանագրի հիման վրա:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնալուծության պետական գրանցումը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում: Դիմումները գործակալություն են ներկայացվում էլեկտրոնային եղանակով կամ սպասարկման կենտրոնների միջոցով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Աշխարհահռչակ շանսոնյե, երգահան, բանաստեղծ, գրող, կինոդերասան եւ հասարակական գործիչ Շառլ Ազնավուրի կյանքի ու գործունեության մասին պատմող «Մըսյո Ազնավուր» ֆիլմում Ազնավուրի դերակատարն է «Ոսկե գլոբուս» եւ BAFTA մրցանակների կրկնակի հավակնորդ Թահիր Ռահիմը: Երեկ դերասանն առաջադրվել է նաեւ «Սեզար» մրցանակի՝ «Մըսյո Ազնավուր» ֆիլմի «Լավագույն դերասան» անվանակարգում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-15 -20 -2 + 2
Կոտայքի լեռներ	-10 -15 -2 + 2
Կոտայքի նախալեռներ	-4 - 9 0 + 3
Գեղարքունիք	-8 - 11 -2 + 1
Լոռի	-4 - 8 +7 + 10
Տավուշ	0 - 2 +3 + 6
Արագածոտնի լեռներ	-15 - 18 -2 + 2
Արագածոտնի նախալեռներ	-5 - 9 -2 + 2

Արարատ	0 - 5 +2 + 4
Արմավիր	-2 - 5 +2 + 4
Վայոց ձորի լեռներ	-6 - 9 +2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +2 + 5
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	0 + 3 + 7 + 10
ԼՂՀ	-2 - 6 + 8 + 10
Երեւան	-1 - 3 0 + 2

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **30.1.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*